Քրիստոսանման ուսուցման համառոտ նկարագիրը

Մաս 1. Կենտրոնացեք Հիսուս Քրիստոսի վրա

Ուսուցանեք Հիսուս Քրիստոսի մասին՝ անկախ նրանից, թե ինչ եք ուսուցանում	**Օգնեք սովորողներին գալ Հիսուս Քրիստոսի մոտ**
Կարևորեք Հիսուս Քրիստոսի օրինակը	Օգնեք սովորողներին ճանաչել Տիրոջ սերը, զորությունը և ողորմությունը իրենց կյանքում
Ուսուցանեք Հիսուս Քրիստոսի տիտղոսների, դերերի և հատկանիշների մասին	Օգնեք սովորողներին ամրացնել իրենց հարաբերությունները Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ
Գտեք խորհրդանիշներ, որոնք վկայում են Հիսուս Քրիստոսի մասին	Օգնեք, որ սովորողները գիտակցված ձգտեն ավելի նմանվել Հիսուս Քրիստոսին

Մաս 2. Քրիստոսանման ուսուցման սկզբունքները

Սիրեք նրանց, ում ուսուցանում եք	**Ուսուցանեք Հոգով**	**Ուսուցանեք վարդապետությունը**	**Ջանասիրաբար սովորելու կոչ արեք**
Սովորողներին նայեք այնպես, ինչպես Աստված է տեսնում նրանց:	Պատրաստվեք հոգևորապես:	Սովորեք Հիսուս Քրիստոսի վարդապետությունը ինքներդ ձեզ համար:	Օգնեք ուսանողներին պատասխանատվություն ստանձնել իրենց ուսման համար:
Փորձեք ճանաչել նրանց. հասկացեք նրանց հանգամանքները, կարիքները և ուժեղ կողմերը:	Միշտ պատրաստ եղեք արձագանքել սովորողների կարիքների վերաբերյալ հոգևոր հուշումներին:	Ուսուցանեք սուրբ գրություններից և վերջին օրերի մարգարեների խոսքերից:	Խրախուսեք սովորողներին ճանաչել Փրկչին՝ ամեն օր ուսումնասիրելով ավետարանը:
Աղոթեք նրանց համար անվանապես:	Ստեղծեք պայմաններ և հնարավորություններ, որպեսզի սովորողներն ուսուցանվեն Սուրբ Հոգով:	Օգնեք սովորողներին փնտրել, ճանաչել և հասկանալ սուրբ գրությունների ճշմարտությունները:	Հրավիրեք սովորողներին պատրաստվել դասին:
Ստեղծեք ապահով միջավայր, որտեղ բոլորը հարգված են և գիտեն, որ իրենց մասնակցությունը գնահատվում է:	Օգնեք սովորողներին փնտրել, ճանաչել և գործել ըստ անձնական հայտնության:	Կենտրոնացեք ճշմարտությունների վրա, որոնք հանգեցնում են դարձի և կերտում հավատք առ Հիսուս Քրիստոս:	Խրախուսեք սովորողներին կիսվել իրենց սովորած ճշմարտությամբ:
Պատշաճ ուղիներ գտեք՝ ձեր սերն արտահայտելու համար:	Հաճախ վկայություն բերեք և հրավիրեք սովորողներին կիսվել իրենց զգացմունքներով, փորձառություններով և վկայություններով:	Օգնեք սովորողներին անձնական համապատասխանություն գտնել Հիսուս Քրիստոսի վարդապետության մեջ:	Հրավիրեք սովորողներին ապրել համաձայն նրա, ինչ իրենք սովորում են: